

«Մեկ մարդու կամ այսօրվա իշխանությունների որոշելիքը չէ մեր պայքարը դադարեցնելը: Մեր իրավունքների համար պայքարը շարունակվում է: Մենք տեսնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում մարդիկ անհաշտ են Արցախի կորստի մտքի հետ, ու այս հարցում մենք մենակ չենք: Կարծում եմ՝ Հայաստանում ազգային իշխանություններ լինելու դեպքում, այս բոլոր հարցերն ու մտահոգությունները կվերանան» (Արցախի Նախագահի պաշտոնակատար Աշոտ Դանիելյան, 20.02.2026):

Ուրբաթ
6 մարտի 2026թ.
№ 4 (654)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468
2 6 0 0 4 >
9 771829 346006

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Իրանի Իսլամական
Հանրապետության
գերագույն հոգևոր
առաջնորդ այաթոլլա
Ալի Խամենեին, ով
գրովեց ռազմական
գործողությունների
հետևանքով

Սյունիքում մտահոգված են մարդկային կյանքեր խլող և տարածաշրջանի անվտանգությունը խաթարող պատերազմով, որ ընդդեմ բարեկամ Իրանի ձեռնարկել են ԱՄՆ-ն և Իսրայելը

Հայ-ադրբեջանական քաղաքական պայքարը Սյունիքի համար 1920-1980-ական թթ.

ԽՍՀՄ գոյության տարիներին հայ-ադրբեջանական հարաբերություններն ունեին պասիվ բացասականից ակտիվ բացասականի՝ թշնամականի վերածվելու առնվազն մի քանի նախադրյալներ, որոնց մեջ կարևոր տեղ էր զբաղեցնում Սյունիքով (Մեղրիով) Նախիջևանի հետ ցամաքային կապի հաստատման Խորհրդային Ադրբեջանի անթաքույց ձգտումը, որը թուրք-ադրբեջանական նախորդիվ չիրականացված ծրագրի հստակ շարունակությունն էր:

ԽՍՀՄ ձևավորումից հետո Խորհրդային Ադրբեջանի քաղաքական բացահայտ և բողոքական օրակարգում արագ հայտնված և այսօր «Չանգեզուրի միջանցք» կոչվող նախագիծը դառնալու էր ոչ միայն Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պրոբլեմատիկ հարցերից մեկը, այլև ձեռք էր բերելու միութենական Նշանակություն, որին

տարբեր փուլերում մասնակցելու էին Մոսկվայի կենտրոնական իշխանությունները: Խնդիրը, որն իրականում թուրք-ադրբեջանական տանդեմի նախորդ փուլում իրականացված հետևողական քայլերի կամ կիսատ մնացած տեղից շարունակելու ցանկությունն էր, ներկայացվում էր իբրև թե պարզ կոմունիկացիայի «անմեղ» ու տեխնիկական հարց. Խորհրդային Ադրբեջանի իշխանություններն առաջարկում էին՝ Մեղրիով ճանապարհի կառուցելու վերաբերյալ մի նախագիծ, որի հիմնական նպատակն էր իրար կապել Ադրբեջանն ու Նախիջևանը: Եվ չնայած որ ԽՍՀՄ կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև ճանապարհների ու ընդհանրապես լոգիստիկ խնդիրներ չկային՝ Խորհրդային Ադրբեջանը տասնամյակներ շարունակ հետևողական պայքարում էր կոնկրետ Մեղրիով, Հայաստան-Իրան սահմանի երկայնքով կոր ճանապարհի կառուցելու համար և հրաժարվում էր դիտարկել Նախիջևան

Շարունակությունը՝ էջ 4



Սյունիքյան մտահոգություններ, որոնց պատասխանն ակնկալում ենք ընտրությունների մասնակցող քաղաքական ուժերից

Մեկնարկ ենք տալիս «Սյունյաց Երկիր» պարբերականի Նոր հաղորդաշարին՝ «Հայացք Սյունիքից» խորագրով:

Խնդիր ենք դրել՝ ժամանակի ընթացքում հասնել նրան, որ հաղորդաշարը թողարկվի շաբաթական պարբերականությամբ, իսկ նախընտրական քարոզի օրերին, պահանջարկ լինելու դեպքում, գուցե և ավելի հաճախակի:

Ժամային առումով հաղորդումները կլինեն հարցազրույցի, թեմատիկ զրույցի, բանավեճի ձևաչափով:

«Հայացք Սյունիքից» հաղորդաշարը վերկուսակցական, վերլուծաբանական է: Եվ բաց է բոլոր նրանց համար, ովքեր ասելիք կունենան այն թեմաների շուրջ, ինչը կներկայացնեն ստորև:

Հաղորդաշարը լինելու է այն հարթակը, որտեղ քննարկելու ենք բախտորոշ ժամանակներ ապրող Սյունիքի շուրջ և Սյունիքի ներսում տեղի ունեցող իրադարձությունները...

Ինչո՞ւ ենք հիմա առաջացավ նման հաղորդաշար կազմակերպելու անհրաժեշտությունը:

Երկիրը պատրաստվում է Ազգային ժողովի ընտրությունների, որ տեղի կունենա հունիսի 7-ին...

Այդ ընտրություններով, առանց չափազանցության, կորոշվի հայոց ակախի և ինքնիշխան պետության հետագա ընթացքը:

Սպասվող ընտրությունները բախտորոշ կլինեն նաև Սյունյաց աշխարհի համար:

Ինչո՞ւ է պայմանավորված այդ անհանգստությունը:

Փորձեք վերհիշել 2020 թ. կապիտուլյացիայից հետո մեր հանրապետության շուրջ տեղի ունեցող իրադարձությունները:

Բոլոր զարգացումների, բոլոր քննարկումների, բոլոր՝ այսպես կոչված ծրագրերի, ստորագրված թղթերի առանցքում կամ թիրախում Սյունիքն է:

Փորձեք դիտարկել այսօրվա անցուդարձը...

Նախընտրական զարգացումներ, հանդիպումներ միջազգային հարթակներում, խոստումներ, հավաստիացումներ, մանկապլանացիաներ...

Բոլորի առանցքում դարձյալ Սյունիքն է...

Արդյունքում՝ Սյունիքը դարձել է Հարավային Կովկասի ամենափխրուն տարածաշրջանը, աշխարհի ուժային կենտրոնների շահերի բախման կիզակետը:

Հետևեք լրահոսին. չկա մի օր, որ աշխարհի առաջատար լրատվամիջոցները չանդրադառնան Սյունիքին:

Չկա մի օր, որ Սյունիքի հանդեպ բացահայտ հավակնություններ չստեն Ադրբեջանից կամ Թուրքիայից:

Սյունիքի մասին, որքան էլ տարօրինակ է ու զարմանալի, չեն խոսում և մտահոգություն չեն հայտնում միայն Սյունիքում:

Մենք, կարծես, որդեգրել ենք անտարբեր հայեցողի պահվածք և թամաշա ենք անում, թե ինչպես են պատռոտ-պատռոտ անում Երբեմնի անվաճ, Երբեմնի հպարտ, մեր փառավոր նախնիներից մեզ փոխանցված Սյունիքը:

Այդ բոլորով հանդերձ՝ որևէ մեկին չի հաջողվել ու չի հաջողվի (կարծում ենք) Սյունիքը Շարունակությունը՝ էջ 6

ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆ.

«Ես լինելու եմ ձեր թեկնածուն վարչապետի պաշտոնում, որովհետև ղեկավարվելու եմ բացառապես Հայաստանի շահերով»



PHOTOLURE
VAHRAM BAGHDASARYAN

Այնպես է ստացվել, որ Ռուսաստանն ունի իր թեկնածուն Հայաստանի վարչապետի պաշտոնում, Միացյալ Նահանգներն ունի իր թեկնածուն, Եվրոպան ունի իր թեկնածուն:

Եվ այդ՝ պատկերացնում եք, Ադրբեջանն ունի իր թեկնածուն Հայաստանի վարչապետի պաշտոնում:

Իսկ Հայաստան՝ը: Հայաստանը պետք է ունենա իր թեկնածուն, որի ծրագրերն ու գործերը տեսնելիս աշխարհի որ անկյունում էլ լինի, Նայելու են՝ որպես մեր մարդը, մեր տղեն:

Այո, Հայաստանը Նույնպես ունի իր թեկնածուն:

Ես Հայաստանի թեկնածուն եմ:

Ես լինելու եմ ձեր թեկնածուն վարչապետի պաշտոնում, որովհետև ղեկավարվելու եմ բացառապես Հայաստանի շահերով, մեր սեփական երկրի շահերով:

Սիրելի հայրենակիցներ,

Պատերազմից հետո հունվարի 28-ը շատերի համար այլևս տոն չէ: Այն դարձել է օր, որ կարծես հիշեցնում է, որ մենք կորցրել ենք վստահությունը մեր պետության ու անվտանգության, ինքներս մեր հանդեպ:

Վարչապետի պաշտոնին իմ առաջադրվելու թիվ մեկ նպատակը մեր երկրում իրական խաղաղություն հաստատելն է:

Բոլորս գիտենք, որ խաղաղությունը կարող է երաշխավորված լինել այն դեպքում, երբ ուժեղ ես, երբ կարող ես պաշտպանել ինքդ քեզ:

Այն խաղաղությունը, որը կախված է ուրիշի կամքից կամ թելադրած պայմաններից՝ խաղաղություն չէ: Եթե ուզում եմք իրական ու ապահով խաղաղություն, պետք է լինենք ուժեղ, ունենանք բանակ, որին վստահում են քաղաքացիները, որտեղ պաշտպանված է զինվորը, հարգված է սպան և որի հետ հաշվի են նստում:

Խաղաղությունն առանց ուժեղ անվտանգության ինքնախաբեություն է և դա վտանգավոր է մեր ապագայի համար:

Իմ առաջին քայլը՝ որպես Վարչապետ, կլինի ստեղծել ռազմական բարեփոխումների հանձնաժողով, որը կմիավորի Հայաստանի և աշխարհի լավագույն միտքն ու փորձը: Հանձնաժողովը վեց ամսվա ընթացքում պետք է մշակի համապարփակ ռազմավարական ծրագիր, որի իրականացումը կսկսվի անմիջապես:

4 ԲԱՅԸ ԴՄԵՇԽՄԱՆՈՒՄ ԴԵՏԱԿԻ ԱՎԱԿԻՆԻ ԽԱՂԱՊՈՒՄՆԵՐԻՆ

Քայլ 2. Հստակ ժամկետներ և հաշվետվողականություն

Հանձնաժողովին կտրվի կոնկրետ մանրատ՝ մեր պաշտոնավարման առաջին տարվա ավարտին ապահովել զսպման լիարժեք կարողություններ, մեր պաշտոնավարման առաջին ժամկետի ավարտին հասնել ռազմական հավասարակշռության:

Քայլ 3. Պետության ներդրումն անվտանգության համակարգում

Նույնիսկ մինչև հանձնաժողովի ծրագրի ներկայացումը՝ մենք կընդունենք օրենսդրություն, որով պաշտպանության ծախսերը երբեք չեն կարող լինել Հայաստանի համախառն ներքին արդյունքի, այսինքն՝ ՀՆԱ-ի 8 տոկոսից ցածր: Սա նշանակում է՝ մեր պաշտոնավարման առաջին տարվան հաջորդող պետական քյուշեով ռազմական ծախսերն առնվազն մեկ միլիարդ դոլարով ավելի են լինելու այսօրվա ծախսերի համեմատ: Մենք պաշտպանական ծախսերից տարեկան կես միլիարդ դոլար պարտադիր կուղղենք հայաստանյան ընկերություններից գնումների համար՝ արագացնելու համար մեր ներքին ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը:

Քայլ 4. Ճշմարտություն և պատասխանատվություն

Ուժեղ բանակը նաև ճշմարտություն է ու պատասխանատվություն:

Մենք անմիջապես կհանրայնացնենք 2020 թվականի 44-օրյա պատերազմի վերաբերյալ հանձնաժողովի զեկույցը, որը Նիկոլ Փաշինյանը հրաժարվում է հրապարակել, ինչից կարելի է միայն եզրակացնել, որ նա այդ կերպ փորձում է թաքցնել իր ձախողումները: Հասարակությունն իրավունք ունի իմանալու այս հարցերի պատասխանները և մենք դա կապահովենք: Մենք պարտավոր ենք գնահատել եւ թեկուզ ուշացած արժևորել մեր հերոսների սխրանքը, որն անտեսված է:

Մենք կշարունակենք, կընդլայնենք և կարագացնենք մեր ռազմական համագործակցությունն ու վերապատրաստման ծրագրերը Ֆրանսիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ:

Կլինեն մարդիկ, որ կհարցնեն՝ ինչպե՞ս կարող ենք այդպիսի քայլեր մեզ թույլ տալ: Իմ պատասխանն է՝ իսկ ինչպե՞ս կարող ենք այդպիսի քայլեր չանել: Ոչինչ նշանակություն չունի, եթե չունենք խաղաղություն և անվտանգություն, ինչն իրական աշխարհում նշանակում է մեր կարողությունը պաշտպանելու ինքներս մեզ: Ակնհայտ է, որ այս բոլոր ողջախոհ քայլերը պետք է լինեն Նիկոլ Փաշինյանի ծրագրի հիմքում՝ սկսած 2020 թվականի նոյեմբերի 10-ից: Բայց այդպես չեղավ, ինչը նշանակում է, որ իրական անվտանգության ու խաղաղության կարող ենք հասնել միայն այս տարվա ընտրություններում Նոր վարչապետ ընտրելով:

Մենք պատասխանատու ենք մեր քաղաքացիների առջև, խոնարհվում ենք մեր հերոսների սուրբ հիշատակի առջև և պարտական ենք նրանց ընտանիքներին:





Խնդիրն ավելի մտահոգիչ է Կապան համայնքի Դավիթբեկ գյուղում, որտեղ դպրոցում սովորում է 47 աշակերտ, իսկ մանկավարժական կազմի 90 տոկոսը տեղացի է: Նախատեսվում է դպրոցի միավորումն Արծվանիկի դպրոցի հետ, ինչը Դավիթբեկում մտահոգություններ է առաջացրել:

Սյունիքի 48 դպրոցի սպասվում է օպտիմալացում

Սյունիքի մարզում սեպտեմբերի 1-ից 1029 աշակերտ կտեղափոխվի այլ դպրոցներ: Միևնույն ժամանակ անորոշ է մնում 421 ուսուցչի և 670 օժանդակ աշխատակցի հետագա զբաղվածության հարցը:

Խոսքը վերաբերում է ՀՀ կառավարության 2023 թ. սեպտեմբերի 11-ի №1790-Ա/2 որոշմանը, որով հաստատվել է «ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագիրը»: Փաստաթուղթով նախատեսվում է Սյունիքի մարզում օպտիմալացնել 48 դպրոց. որոնց թվում՝ սահմանափակ և բարձր լեռնային բնակավայրերի դպրոցներ:

Օպտիմալացվող դպրոցների պատկերն ըստ խոշորացված համայնքների հետևյալն է՝ Կապան՝ 12, Սիսիան՝ 19, Տաթև՝ 2, Գորիս՝ 3, Տեղ՝ 3, Զաջարան՝ 4, Մեղրի՝ 5:

Ծրագրի առաջին փուլը նախատեսվում է սկսել 2026 թվականի սեպտեմբերի 1-ից:

Սակայն Սյունիքի պարագայում հարցը դուրս է գալիս զուտ կրթական հարթությունից: Այստեղ բախվում է երկու իրողություն՝ կրթության արդյունավետության բարձրացման նպատակն ու սահմանափակ ծախսերի կենսունակության պահպանումը:

Խնդիրն ավելի մտահոգիչ է Կապան համայնքի Դավիթբեկ գյուղում, որտեղ դպրոցում սովորում է 47 աշակերտ, իսկ մանկավարժական կազմի 90 տոկոսը տեղացի է: Նախատեսվում է դպրոցի միավորումն Արծվանիկի դպրոցի հետ, ինչը Դավիթբեկում մտահոգություններ է առաջացրել:

Դավիթբեկից մինչև Արծվանիկ ճանապարհի հեռավորությունը կազմում է մոտ 10-11 կմ: Սովորական պայմաններում ավտոմեքենայով ճանապարհի տևողությունը 13-14 րոպե է: Սակայն լեռնային պայմաններում այդ ցուցանիշները հարաբերական են. ձմռանը, մառախուղի, մերկասառույցի կամ առատ ձյան պայմաններում ճանապարհի տևողությունը կարող է եակնորոշել երկարել և հավելյալ դժվարություններ հարուցել:

Դավիթբեկ գյուղի բնակիչ Վահագն Մովսիսյանը, ով ունի մեկ դպրոցահասակ և մեկ մանկապարտեզահասակ երեխա, դեմ է դպրոցի հնարավոր վերամիավորմանը:

«Մեր դպրոցի շենքային պայմանները լավ են, կրթական գործընթացը կազմակերպված է: Չնայած մեր դպրոցը ևս ներառված է ծրագրում, սակայն, ամբողջ գյուղը դեմ է փակմանը», - ասում է նա:

Նրա խոսքով՝ դպրոցի փակումը կարող է հանգեցնել բնակավայրի դատարկմանը. «Եթե դպրոցը չլինի, գյուղն էլ չի լինի: Մարդիկ ստիպված կտեղափոխվեն: Շատերը

երեխաներին Արծվանիկ չեն ուղարկի»:

Վահագն Մովսիսյանը նշում է նաև, որ արդեն կազմակերպվել է ստորագրահավաք, և դիմումներ են ուղարկվել երկրի համապատասխան մարմիններին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԵԼՆԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՊԵՏԱԿԱ ԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

155	Կապան	գ. Վարդավանքի միջնակարգ դպրոց
156	Կապան	գ. Եղեգի միջնակարգ դպրոց
157	Կապան	գ. Դավիթբեկի միջնակարգ դպրոց
158	Կապան	գ. Աղվանու հիմնական դպրոց
159	Կապան	գ. Տանձավերի միջնակարգ դպրոց
160	Կապան	գ. Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց
161	Կապան	գ. Օխտարի միջնակարգ դպրոց
162	Կապան	գ. Տավրուսի միջնակարգ դպրոց
163	Կապան	գ. Ագարակի հիմնական դպրոց
164	Կապան	գ. Ճակատենի հիմնական դպրոց
165	Կապան	գ. Ներքին Հանդի հիմնական դպրոց
166	Կապան	գ. Շիկահողի միջնակարգ դպրոց
167	Սիսիան	գ. Ծղուկի միջնակարգ դպրոց
168	Սիսիան	գ. Սպանդարյանի միջնակարգ դպրոց
169	Սիսիան	գ. Թասիկի հիմնական դպրոց
170	Սիսիան	գ. Սավարդի հիմնական դպրոց
171	Սիսիան	գ. Արևիսի հիմնական դպրոց
172	Սիսիան	գ. Հանգամախի միջնակարգ դպրոց
173	Սիսիան	գ. Շենաթաղի հիմնական դպրոց
174	Սիսիան	գ. Լորի միջնակարգ դպրոց
175	Սիսիան	գ. Որոտանի հիմնական դպրոց
176	Սիսիան	գ. Լծենի հիմնական դպրոց
177	Սիսիան	գ. Շամբի միջնակարգ դպրոց
178	Սիսիան	գ. Մուցքի հիմնական դպրոց
179	Սիսիան	գ. Բալաբի տարրական դպրոց
180	Սիսիան	գ. Աղիտուի հիմնական դպրոց
181	Սիսիան	գ. Բունիսի հիմնական դպրոց
182	Սիսիան	գ. Տուրոսի միջնակարգ դպրոց
183	Սիսիան	գ. Սոֆյուկի հիմնական դպրոց
184	Սիսիան	գ. Տորունիքի հիմնական դպրոց
185	Սիսիան	ք. Դաստակերտի միջնակարգ դպրոց
186	Տաթև	գ. Սվարանցի միջնակարգ դպրոց
187	Տաթև	գ. Տանձատափի հիմնական դպրոց
188	Գորիս	գ. Շուշուկի միջնակարգ դպրոց
189	Գորիս	գ. Բարձրավանի միջնակարգ դպրոց
190	Գորիս	գ. Ներքին Խնձորենի միջնակարգ դպրոց
191	Տեղ	գ. Արավուսի տարրական դպրոց
192	Տեղ	գ. Վաղատուրի միջնակարգ դպրոց
193	Տեղ	գ. Խոզավարի միջնակարգ դպրոց
194	Քաջարան	գ. Գեղի միջնակարգ դպրոց
195	Քաջարան	ք. Քաջարանի թիվ 5 միջնակարգ դպրոց
196	Քաջարան	գ. Լեռնաձորի հիմնական դպրոց
197	Քաջարան	ք. Քաջարանի թիվ 6 հիմնական դպրոց
198	Մեղրի	գ. Վարդանիձորի միջնակարգ դպրոց
199	Մեղրի	գ. Լիճքի միջնակարգ դպրոց
200	Մեղրի	գ. Ավանքի միջնակարգ դպրոց
201	Մեղրի	գ. Նոնաձորի միջնակարգ դպրոց
202	Մեղրի	գ. Կարճևանի հիմնական դպրոց

տասիսան մարմիններին:

«Բոլոր աշակերտները մեր գյուղից են: Դպրոցը գործում է 1909 թվականից: Պատմություն ունեցող կրթօջախ է, ունեցել ենք ոսկե մեդալակիրներ, այժմ էլ ունենք աշակերտ, ով պատրաստվում է մասնակցել հանրապետական օլիմպիադայի: Աշակերտների քանակը քիչ է, բայց որակ ապահովվում է», - ընդգծում է նա:

Ծնողի համոզմամբ՝ եթե դպրոցը միավորվի Արծվանիկի դպրոցին, դա կարող է խթանել արտագաղթը դեպի Կապան կամ այլ բնակավայրեր. «Մարդիկ կզնայն այնտեղ, որտեղ և՛ աշխատանք կա, և՛ դպրոց: Այդ դեպքում գյուղում մնալու ցանկությունը կվազի»:

Ազգային կրթության խորհրդի անդամ Արմեն Ներսիսյանի գնահատմամբ՝ նման գործընթացները կարող են հանգեցնել գյուղերի աստիճանական դատարկման՝ առաջացնելով սոցիալական, ժողովրդագրական և անվտանգային հետևանքներ:

Ըստ Ազգային կրթության խորհրդի տվյալների՝ Կապանում օպտիմալացման ենթակա դպրոցներում սովորում է 214 աշակերտ, Գորիսում՝ 167, Զաջարանում՝ 167, Սիսիանում՝ 380, Մեղրիում՝ 101: Ուսուցչական կազմը՝ ընդհանուր 421 մարդ: Օժանդակ անձնակազմը՝ 670 մարդ:

Այդ թվերը ցույց են տալիս, որ խոսքը միայն կրթական համակարգի վերակազմակերպման մասին չէ: Խոսքը միաժամանակ աշխատատեղերի, համայնքների սոցիալական կառուցվածքի և սահմանամերձ բնակավայրերի կենսունակության մասին է:

«Երբ գյուղը չունեցավ ճանապարհ և դպրոց, այդ գյուղը դատարկվելու է: Մենք արտագաղթի և դեմոգրաֆիկ տեղաշարժի հսկայական ծավալ ունենք. գյուղում հող կա, բայց երիտասարդը հող մշակել չի ուզում, գալիս է քաղաք, Yandex-ի վարորդ է դառնում, ապրում վարձով, այն դեպքում, երբ գյուղում տուն ունի», - նշել է կառավարման փորձագետ Արթուր Գևորգյանը: Նրա խոսքով՝ մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների, ինչպես նաև բժշկական հաստատությունների օպտիմալացումը կարող է խթանել գյուղական բնակավայրերից արտագաղթին:

Դպրոցների օպտիմալացումը, կարծում ենք, կարող է ունենալ բացասական հետևանքներ՝ ընդգրկելով համայնքների սոցիալական և անվտանգային հարցերը:

Հ.Գ. Ստորև՝ օպտիմալացման ենթարկվող դպրոցների ցանկն ըստ ՀՀ կառավարության 2023 թ. սեպտեմբերի 11-ին №1790-Ա/2 որոշման:



Հայ-ադրբեջանական քաղաքական պայքարը Սյունիքի համար 1920-1980-ական թթ.

Սկզբը՝ էջ 1

Նի հետ կապ ապահովող այլ ճանապարհների առաջարկը: Ադրբեջանի համար միակ ընդունելի այդ ճանապարհը «զարմանալի» զուգահեռությամբ համընկնում էր թուրք-ադրբեջանական ցամաքային կապ ունենալու այն ծրագրին, որը կիսակատար էր մնացել... Հարցի կարևորագույն կողմերից էր նաև այն, որ հստակ նպատակ էր դրված կտրել Հայաստան-Իրան դարավոր սահմանը, քանի որ առաջարկվող ճանապարհի կառուցման պարագայում Հայաստանը փաստացի զրկվելու էր Իրանի հետ կապող տարածքներից:

Այն, որ Մեդրիով ճանապարհը կամ «թյուրքական միջանցքը» ոչ թե սուկ լուգիստիկ դյուրություն ապահովելու հարց էր, այլ թուրք-ադրբեջանական համատեղ ու գերկարևոր ռազմավարական երազանք, ապացուցում են նաև այն փաստերը, որ ԽՍՀՄ գոյության ողջ ընթացքում Խորհրդային Ադրբեջանի բոլոր իշխանություններն ու ղեկավարները դրան միտված քայլեր ու ջանքեր են գործադրել: Բնական է նաև, որ այդ ամբողջ գործընթացին հետևող սակայն շատ ուշադիր հետևել է Թուրքիան՝ ինքնուրույն փորձելով շատ ակնհայտ չցուցադրել իր հետաքրքրվածությունը թուրք-ադրբեջանական համատեղ նպատակի հանդեպ, քանի որ դա կարող էր, ի վերջո, ընկալվել իբրև այլ պետության՝ ԽՍՀՄ-ի ներքին գործերին միջամտելու փորձ:

Սյունիքով՝ ադրբեջանական նախագծով ճանապարհի կառուցելու խնդրին Խորհրդային Հայաստանի բոլոր ղեկավարներն արձագանքել են ընդգծված սկզբունքայնությամբ և այն մերժել՝ բերելով հիմնավոր փաստարկներ: Խորհրդային Հայաստանի տարբեր պաշտոնյաների հուշերում պահպանվել են դրվագներ, որոնք ի ցույց են դնում, որ վերջիններս հստակ գիտակցել են այդ ամենի վտանգավոր հետևանքներն ու պատմական նախընթաց փուլում չլուծված հարցը բողոքական շարունակելու Ադրբեջանի ձգտումները: Հայ պետական ու քաղաքական գործիչների հուշագրությունները պարունակում են այդ խնդրի վերաբերյալ բազմաթիվ հետաքրքիր փաստեր, կուլիսային զարգացումների նկարագրություններ: Մեր կողմից ուսումնասիրված գրքերում աչքի է զարնում այն հանգամանքը, որ կոմունիստ հայ ղեկավարները փորձել են հնարավորինս մնալ ազգային դիրքերում անգամ ԽՍՀՄ գաղափարախոսական կաղապարվածության պայմաններում:


Փաստերը ցույց են տալիս, որ Ադրբեջանի պահանջները տատանվել են Սյունիքի՝



Յարեյ Սարգայան



Գրիգոր Հարությունյան



Վաղիմիր Մովսիսյան

իրենց ցանկալի հատվածներով ճանապարհի ստանալուց մինչև ամբողջ Մեդրիով տիրելը՝ դրա համար ներկայացնելով նաև տարածքների փոխանակման առաջարկներ: **Մեդրիի խնդրի մասին հուշագրական փաստեր կան, որոնք վերաբերվում են 1937-1953 թթ. Խորհրդային Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի (Արուսիկոմ) կառավարման շրջանին և նրա անձին:** Մասնավորապես՝ հայտնի պետական գործիչ, Խորհրդային Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ (փոխվարչապետ) Ալեքսան Կիրակոսյանն իր հուշերում պատմում է, որ 1952 թ. դեկտեմբերին Գ. Հարությունյանի աշխատասեյակում ներկա է եղել նրա և Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Միրզաֆար Բաղիրովի հեռախոսագրույցին, որի ընթացքում Հարությունյանը շատ կոպիտ է խոսել ադրբեջանցի պաշտոն-

յայի հետ. «**Դե ի՞նչ էք ասում, Միրզաֆար, այդ հարցը բազմիցս քննության է առնվել Կենտկոմում, իսկ Դուք շարունակում եք որբորդ անգամ լույս բանը կրկնել: Դրանք անտեղի և ավելորդ խոսակցություններ են, հարցը վաղուց սպառված է... Ո՛չ Նորաշենը, ո՛չ Աղահանքերը... Այո, Դարաբաղը լույսն ապրեց... Եվ ո՞չ մի կարգավիճակով...»:** Այնուհետև երեք անգամ կրկնեց. «**Է՛լ ինչ էք ուզում», և լսափողը վայր դրեց: Դրան հաջորդեց Բաղիրովի հասցեին մի շատ ծանր խոսք: Արդեն պաշտոնանկությունից հետո, 1957 թ. Թբիլիսիում, մասնավոր հանդիպման ժամանակ, մի քանի րոպեների ներկայությամբ, նրան հիշեցրի 1952 թ. հեռախոսային խոսակցությունը Բաղիրովի հետ: Հարությունյանը պարզաբանեց, որ Մոսկվայում քննարկումների ժամանակ առաջարկություն էր եղել Մեդրիի փոխարինել Նախիջևանի մի մասի հետ: Գ. Հա-**

րությունյանը կտրականապես մերժել էր այդ առաջարկությունը, որովհետև լավ էր գիտակցում, թե այդ «գործողությամբ» ինչ իրական վտանգ կսպառնար Հայաստանի ռազմավարական անվտանգությանը՝ Մեդրիի կորստով Հայաստանը կհայտնվեր լիակատար անկախախնդրության մեջ, կկտրվեր հարևան Իրանից՝ վտանգելով Չանգեզուրը: Այդ տարբերակը Գ. Հարությունյանը համարում էր անչափ վտանգավոր, և դա՛ ղեռ ԽՍՀՄ-ի առկայության պայմաններում»⁹⁷: Ի դեպ, տարածքների փոխանակման միտքը և՛ ավելի ուշ, և՛ հետագայում՝ ԽՍՀՄ փլուզումից հետո էլ հայտնվելու է քննարկումների, բանակցությունների օրակարգում, ու այդ մասին արտահայտվելու են նաև Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյաներ, օրինակ՝ նախագահ Թուրգուլ օզալը, ինչը ևս մեկ վկայություն է նրա, որ «Թուրանի ճանապարհի» կամ «Չանգեզուրի միջանցքի» շուրջ տասնամյակներով գոյություն է ունեցել թուրք-ադրբեջանական տանդեմի բացահայտ ու բողոքված գործակցություն անգամ ԽՍՀՄ շրջանում:

Հաջորդող տասնամյակներում ևս Խորհրդային Ադրբեջանի քաղաքական օրակարգում Մեդրիի տարածքով ճանապարհի կառուցելու հարցը ոչ միայն շարունակում է մնալ որպես կարևորագույն նպատակ, այլև ակտիվանում է: 1980-ական թվականների առաջին կեսին այդ հարցի վերաբացման, ինչպես նաև կուլիսային և քաղաքական զարգացումների մասին օրագրային գրառումներ ունի Խորհրդային Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը: Այսպես, 1983 թ. հունիսի 15-ին իր օրագրում Կ. Դեմիրճյանը գրում է նաև Մեդրիի ճանապարհի մասին, որն առաջ է քաշել ադրբեջանական կողմը. «**Մեդրիի շրջանով ճանապարհի մասին (հարցը բարձրացրել է ընկեր Բաղիրովը⁹⁸): Ես առաջարկված տարբերակը չընդունեցի: Ստրատեգիական առումով դա անընդունելի է**»⁹⁹:

Մեդրիով ճանապարհի կառուցելու հարցը, հետևողական կերպով և տարբեր մեթոդներ կիրառելով, փորձել է առաջ մղել Խորհրդային Ադրբեջանի ղեկավար (1969-1982 թթ.), իսկ հետո արդեն միութենական Նշանակության պաշտոններ զբաղեցրած Չեյրար Ալիևը: Ասվածի վկայությանը հանդիպում ենք 1983 թ. նոյեմբերի 11-ին Կ. Դեմիրճյանի օրագրային գրառման մեջ, որտեղ նա պատմում է ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ (փոխվարչապետ) և ԽՍՀՄ Կենտկոմի քաղաքականության անդամ Զ. Ալիևի հետ իր հանդիպման մասին. «**Մոսկվայում Ալիև Զ. Ա. (+ Տադեյ Սարգայան) – կանչեց Վ. Ե. Բիրյուկովին¹⁰⁰ և խնդրեց լուծել ավտոճանապարհի հարցը Մեդրիի շրջանով, որն անցնելու էր սահմանի երկայնքով: Ես պնդեցի այլ տարբերակի վրա (ոչ թե սահմանով, այլ թիկունքային կողմով): Ուղարկում է Բիրյուկովին տեղում լուծելու հարցը: Դա ինձ դուր չի գալիս: Ես Բիրյուկովին ասացի, որ մենք ոչ մի կերպ չենք համաձայնվի սահմանով անցնող տարբերակին: Դա ստրատեգիական առումով սխալ որոշում է**»¹⁰¹:

Արդեն 1983 թ. նոյեմբերի 28-ին Կ. Դեմիրճյանի օրագրային գրառման մեջ հանդիպում ենք թեմայի շարունակության մասին տեղեկության, որից պարզվում է, որ Վ. Բիրյուկովը եկել է Հայաստան այդ հարցի լուծման համար: Նա գրում է, որ Մեդրիով ավտոճանապարհի կառուցելու հարցով քննարկում է եղել, և հայտնում է հայկական կողմի որոշման մասին. «**Որոշեցինք՝ առաջին տարբերակ՝ Կապանով, երկրորդ տարբերակ՝ Ծավով: Իրենց առաջարկած (Ադրբ. ԽՍՀ) տարբերակը հարմար է և՛ տնտեսական, և՛ ստրատեգիական առումով: ...Ես ևս մեկ անգամ հրավիրեցի Բիրյուկովի ուշադրությունն այն բանի վրա, որ նոր ճանապարհը սահմանի երկայնքով կառուցել պետք չէ (ինչպես առաջարկում են ընկերները Ադրբ. ԽՍՀ-ից): Դա և՛ տնտեսապես (բանի որ քիչ մեքենա է անցնում, իսկ ճանապարհը շատ թանկ է), և՛ ստրատեգիական առումով ձեռնտու չէ: Մենք առաջարկում ենք Չանգեզևան-Կապան-Մեդրի տարբերակը (այդ ճանապարհը արդեն գործում է Զաքարան-Մեդրիի գործարկումից հետո): Կամ Չանգեզևան-Ծավ-Մեդրի, որը երկար է ընդամենը 4 կիլոմետրով ադրբեջանցի ընկերների առաջարկած տարբերակից, բայց՝ 1/ ստրատեգիական առումով անվտանգ է, 2/ տնտեսապես նպատակահարմար է, քանի որ Մեդրիի շրջանում 8**

Հ հազար հեկտար տարածք չի զբաղեցվի»¹⁰²: Կարեն Դեմիրճյանի արդեն հաջորդ՝ 1984 թ. օրագրային գրառումների մեջ կրկին հանդիպում ենք Մեղրիով ճանապարհի խնդրին, որն ապացուցում է հարցի նկատմամբ Ադրբեջանի և Չեչոյար Ալիևի հետ-ևողական քայլերի մասին: Մասնավորապես՝ 1984 օգոստոսի 29-ի գրառման մեջ Դեմիրճյանը նշում է, որ Մեղրիի ճանապարհի հարցը բնարկել է Ե. Լիզաչովի¹⁰³ հետ և հավելում «Մեղրիով ճանապարհի մասին (ադրբեջանցի ընկերների սխալ պահվածքը)»¹⁰⁴:

Նկատենք, որ ադրբեջանական նախագծած ուղիով ճանապարհ կառուցելու հարցի լուծմանը հասնելու համար Չեչոյար Ալիևը գործի է դրել ոչ միայն իր պաշտոնից բխող վարչական ռեսուրսները, այլև անձնական հարաբերությունները, այդ թվում և՛ լավ հարաբերությունները Կարեն Դեմիրճյանի հետ: Այսպես, 1985 թ. հունվարի 10-ին Կ. Դեմիրճյանը գրում է, որ Մովսիսյանը հանդիպել է ԽՍՀՄ փոխվարչապետ Զ. Ալիևի հետ, գրուցել են ընդհանուր հարցերի մասին շուրջ 45 րոպե: «Նրա նախաձեռնությամբ՝ Մեղրիով ճանապարհի մասին: Նա խնդրեց ինձ հանել առարկությունս: Ես պատասխանեցի, որ հարցն արդեն շատ է խորացել, և որ առանց փորձագիտական հանձնաժողովի որոշման հնարավոր չէ կողմնորոշվել: Նա. «Տո դու թե՞ս ունեցիր այդ որոշման վրա: Ամեն ինչ բեզվից է կախված, ոնց ասես, այդպես էլ կլինի»: Նա ասաց, որ ինձ որպես եղբայր է խնդրում: Ես ասացի, որ մենք մեր որոշումը փոխելու համար հիմքեր չունենք: Նա. «Եթե դու այսպես խնդրեիր, ես բեզ Ադրբեջանի կեսը կտայի»»¹⁰⁵:

Կ. Դեմիրճյանի և Զ. Ալիևի վերոհիշյալ զրույցի մասին իր հուշերում գրում է նաև Խորհրդային Չայաստանի Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանը, որը ներկա է եղել այդ հանդիպմանը: Նա նախ նշում է, որ Ադրբեջանի կողմից Նյուվադի-Նախիջևան ուղիով ճանապարհ կառուցելու հարցին Չայաստանը դեմ է եղել, «բանի որ ճանապարհը պետք է կառուցվեր միայն բաղաձայնական նկատառումներից ելնելով»¹⁰⁶: Այնուհետև Ֆ. Սարգսյանը պատմում է, որ այդ ճանապարհի հարցը բնարկելու համար հանդիպել է Ադրբեջանի Մինիստրների խորհրդի նախագահ Զ. Ն. Սեփոյի հետ և համաձայնեցրել հարցը: «Մենք հանգիստ էինք, որ ամեն ինչ կլուծվի մեր օգտին: Մի բանի օրից մենք Կ. Ս. Դեմիրճյանի հետ եղանք Մ. Ս. Սմիրնյուկովի¹⁰⁷ մոտ: Երբ նրա մոտից դուրս եկանք, Կարեն Սերոբովիչը որոշեց մտնել Զ. Ա. Ալիևի մոտ (նա այն ժամանակ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալն էր, Քաղբյուրայի անդամ): Նա մեզ շատ լավ ընդունեց, հետո ասաց, որ Կարեն Դեմիրճյանի հետ եղբայրական զրույց ունի: Ես թույլտվություն խնդրեցի դուրս գալ, «որպեսզի հեռախոսով զանգահարեմ», բայց Չեչոյար Ալիևին առարկեց, ասաց՝ կարիք չկա, որ ես դուրս գամ: Նա դիմեց Կարեն Դեմիրճյանին. «Կարեն, ես բեզ եղբայրաբար եմ խնդրում տալ համաձայնություն կառուցել ճանապարհի ըստ մեր նախագծի: Չես փոշմանի: Ես բեզ մեծ լավություն կանեմ»: Կ. Դեմիրճյանն ասաց. «Ոչ, այդ դեպքում ես չեմ կարող պատասխան տալ իմ ժողովրդի առաջ»: Զ. Ալիևը ևս մեկ անգամ խնդրեց. «Կարեն, մտածիր, չես փոշմանի»: Կարեն Սերոբովիչը պատասխանեց, որ ինքը մտածելու բան չունի: Ես էլ հավելեցի, որ Զ. Ն. Սեփոյով մեր տարբերակին համաձայն է: Նա այդ խոսքերին նույնիսկ ուշադրություն չդարձրեց և, այնուամենայնիվ, մեր դուրս գալիս ևս մեկ անգամ ասաց. «Կարեն, մտածիր»»¹⁰⁸:

Ըստ Ֆ. Սարգսյանի՝ Զ. Ալիևն ակնարկել է, որ ճանապարհի կառուցումը չխոչընդոտելու դիմաց նա պատրաստ է եղել օգնել Կ. Դեմիրճյանին՝ ընտրվելու ԽՍՀՄ Կոմկուսի Կենտկոմի քարտուղար, ինչպես նաև դառնալու Քաղբյուրայի անդամ¹⁰⁹: Այդ հանդիպումից երկու օր անց տեղի է ունեցել ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահության նիստը, որի օրակարգում է եղել Սյունիքով ճանապարհի կառուցելու երկու առաջարկ՝ հայկական և ադրբեջանական: Այդ նիստին նույն Զ. Ն. Սեփոյովը, որին, ըստ երևույթի, Զ. Ալիևը խիստ դիտողություն էր արել այն բանի համար, որ նա համաձայնություն է տվել ճանապարհի կառուցման հայկական առաջարկին, իրեն պահել է լիովին այլ կերպ և խեղաթյուրելով փաստերը՝ նշել, թե ճանապարհի ադրբեջանական տարբերակի կառուցմանը դեմ է Ֆ. Սարգսյանը, բանի որ նրա ծնողները Նախիջևանից են, և նա չի ցանկանում, որ «Նախիջևանը կապվի Ադրբեջանի հետ»¹¹⁰: Դրան ի պատասխան՝ Ֆ. Սարգսյանը բավական կոպիտ արձագանքել է և ասել, որ Զ. Ն. Սեփոյովը փոխել է իր կարծիքը Զ. Ալիևի ճնշման տակ: Չայաստանի վարչապետի այդ պատասխանի և պահվածքի համար ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ա. Տիխոնովն առաջարկել է Ֆ. Սարգսյանին տալ խիստ նկատողություն և նույնիսկ բնարկել նրա հարցը Քաղբյուրայում¹¹¹:

Մեղրիով ադրբեջանական նախագծով ճանապարհի կառուցման հարցին ի մոտ տեղյակ է եղել նաև դրա չիրագործման հարցում մեծ ավանդ ներդրած Խորհրդային Չայաստանի Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, պետական գործիչ Վլադիմիր Մովսիսյանը, որն իր հուշերում շատ կարևոր և ուշագրավ փաստեր ու մանրամասներ է հաղորդում: Այսպես, ըստ նրա փաստարկված վերլուծության՝ Ադրբեջանի ռազմավարական կարևորագույն ծրագրերից էր Մինջևան-Նախիջևան (A-311) ավտոճանապարհի կառուցումը¹¹², և այդ գործին լծվել էին ադրբեջանցի պաշտոնյաներն ինչպես Բաբվում, այնպես էլ Մոսկվայում: Նա շատ հստակ և հակառակուսին նկարագրում է այդ ճանապարհի պոտենցիալ վտանգը Չայաստանի համար և Ադրբեջանի վատ բողոքներով ու հեռահար նպատակները. «Կասկածից վեր է, որ այդ գործը, իրոք, ռազմավարական նպատակ էր հետապնդում, որովհետև այդ ճանապարհով Ադրբեջանը պետք է միանար Նախիջևանին, և պիտի ապահովվեր կապը Թուրքիայի հետ՝ ըստ նույնպիսի Մեղրիի, այսինքն՝ հայկական տարածքի վրայով և Զայաստանն էլ սովոր շերտով անջատվեր Իրանից»¹¹³: Կ. Մովսիսյանը փաստում է, որ այդ հակահայկական ծրագրի տապալման գործին լծվել է Խորհրդային Չայաստանի պետական վերնախավը՝ Կ. Դեմիրճյանը, Ֆ. Սարգսյանը, Ա. Կիրակոսյանը, որոնք միացել է մեծագույն ջանքեր է ներդրել նաև ինքը. «Ինձ ուղղակի հանձնարարվեց, որպեսզի Մոսկվայում զբաղվեմ այդ ճանապարհի չկառուցելու, այդ նախագիծը չհաստատելու հարցերով»¹¹⁴: Ինչպես արդեն նշել ենք, Սյունիքով անցնող ճանապարհի կառուցման խնդիրն Ադրբեջանը կարողացել էր տեղափոխել ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների՝ Մոսկվայի օրակարգ, որտեղ բնականաբար հարցի ստրատեգիական և այլ նրբերանգները կամ անտեսվելու էին, կամ չէին ընկալվելու, բանի որ խոսքը, ի վերջո, այդ պահին նույն պետության՝ Խորհրդային Միության ներքին ճանապարհներին էր վերաբերում: Եվ բանի որ հարցը մի ու թ է նա կան տ ար բ է ր գերատեսչությունների բնարկման օրակարգում էր, ուստի հայ պաշտոնյաները սկսել են ինտենսիվ աշխատել այդ կառույցների և դրանց ղեկավարների հետ առանձին, որպեսզի կարողանան ներկայացնել խնդրի տարբեր առանձնահատկություններ, փաստարկներ՝ սկսած գյուղատնտեսականի մինչև ռազմական: Օրինակ՝ Խորհրդային Չայաստանի ղեկավարության ջանքերով տեղի է ունեցել Կ. Մովսիսյանի հանդիպումը ԽՍՀՄ պաշտպանության նախարար, մարշալ Ս. Սոկոլովի հետ, որի ընթացքում հայ պաշտոնյան ներկայացրել է ադրբեջանական նախագծով ճանապարհի կառուցման վտանգները ռազմական առումով: «Ունեցվելուց հետո, պաշտպանության նախարարը իր դժգոհությունը հայտնեց ադրբեջանական տարբերակի վերաբերյալ և հանձնարարեց, որպեսզի հարցը բնարկելիս հաշվի առնեն նաև իր ղեկավարած նախարարության կարծիքը»¹¹⁵: Խորհրդային Չայաստանի ղեկավարությանը հաջողվել է ճանապարհի կառուցման վերաբերյալ բացասական եզրակացություն ստանալ ԽՍՀՄ երկաթուղային ուղիների նախարարությունից և ԽՍՀՄ սահմանապահ զորքերի Անդրկովկասյան օկրուգի հրամանատարությունից¹¹⁶: Սակայն շուտով փորձագիտական հանձնաժողովից, որին ուղարկվել են այդ եզրակացությունները, տեղեկացրել են, որ բացի սահմանապահ զորքերի հրամանատարությունից՝ մյուս կառույցները, այդ թվում և՛ ԽՍՀՄ պաշտպանության նախարարությունը, հրաժարվել են իրենց կարծիքներից: «Պարզ էր, որ այս ամենի դիրիժորը Չեչոյար Ալիևն էր»¹¹⁷, – իրավացիորեն պնդում է Կ. Մովսիսյանը: Ահա այդպիսի պայմաններում տեղի է ունեցել փորձագիտական հանձնաժողովի նիստը, որը պետք է վերջնական եզրակացություն

տար Սյունիքի տարածքով ճանապարհ կառուցելու հայկական կամ ադրբեջանական տարբերակներին: Չնայած անձամբ Զ. Ալիևի և Խորհրդային Ադրբեջանի ներդրած ահռելի ջանքերին և տարատեսակ ճնշումներին՝ հայկական կողմը կարողացել է հիմնավորված փաստարկներով հանդես գալ այդ նիստին: Կ. Մովսիսյանը, պատմելով դրա մանրամասները մասին, մեջբերում է իր ելույթից մի հատված. «Ասացի՛ համարենք, որ դուք եկել էք մեր տուն հյուր: Որպես տանտեր մենք խնդրում ենք, որ դուք սեղանի կողքով անցնեք և գնաք մյուս սենյակ, սակայն դուք գտնում եք, որ հենց սեղանի վրայով պիտի անցնեք: Սա սանձարձակություն է, և մենք թույլ չենք տա, որ մեր տանը դուք ձեր սովորություններով առաջնորդվեք»¹¹⁸: Զանդիպելով հայկական կողմի դիմադրությանը՝ փորձագիտական հանձնաժողովը, անշուշտ, ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների ինստիտուտում, որոշել է տալ այնպիսի լուծում, որն առաջին հայացքից պետք է ձեռնտու լիներ երկու կողմերին. որոշում է ընդունվում կառուցել և՛ ադրբեջանական, և՛ հայկական նախագծերով ճանապարհները, փաստորեն՝ երկու ճանապարհ¹¹⁹: Բայց փաստացի այս լուծումն այնքան էլ ձեռնտու չէր Չայաստանին, բանի որ, ի վերջո, ադրբեջանական նախագծով և հստակ պակասություններ նպատակներ հետապնդող ճանապարհը կառուցվելու էր: Դրա համար Խորհրդային Չայաստանի իշխանությունները չնահանջելով դիմում են այլ քայլերի: Նախ՝ Զայաստանի բարձրագույն ղեկավարությունը ներդրված էր համաձայնությամբ ուղղակի կառավարության բնարկմանը չի ներկայացնում այդ ճանապարհի շինարարության համար ԶԽՍՀ տարածքում հող հատկացնելու հարցը¹²⁰: Դրանից հետո խնդիրը կրկին սրվում է և տեղափոխվում ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նիստի օրակարգ, որտեղ Ն. Տիխոնովը կոչու բնադատության է ենթարկում Խորհրդային Չայաստանի վարչապետ Ֆ. Սարգսյանին, մեղադրում «ճանապարհի կառուցումը ձախողելու մեջ» և առաջարկում որպես պատիժ նրան կատարություն հայտարարել: Սակայն Ֆ. Սարգսյանը ընդամենը տույժ է ստանում և դրանից հետո ևս չի պատրաստվում որևէ հետքայլ անել: Դա հաստատող կարճ երկխոսությունը ներկայացված է Կ. Մովսիսյանի հուշագրությունում. «Երբ նիստից դուրս եկանք, Ֆադեյ Տաճատիցին ասացի, որ մինչև այն է, հողահատկացման մասին որոշումը չեմ մտցնելու կառավարության բնարկմանը, նա ասաց. «Իսկ բեզ ով է ասում, որ մտցնես»»¹²¹: Սյունիքով պակասություններ ճանապարհի կառուցումը կատարելու նպատակով Խորհրդային Չայաստանի իշխանությունները, բացի բաղաձայնական քայլերից, դիմել են տարատեսակ այլ մեթոդների ևս, այդ թվում և՛ իրավապահ որոշ գործողությունների: Այս մասին հետագայում ուշագրավ մանրամասներ է հայտնում 1980-ականներին Մեղրիի շրջանի դատախազ Զոհրաբ Չայրապետյանը: Այսպես, 1988 թ. ադրբեջանական կողմը, այնուամենայնիվ, սկսում է ճանապարհաշինարարական աշխատանքները Մեղրիով դեպի Նախիջևան կառուցվող ճանապարհի իրենց հատվածում. ի դեպ, ճանապարհը կոչվելու էր «Բարեկամություն»: Սակայն հայաստանյան հատվածում ճանապարհի շինարարության աշխատանքների և մասնավորապես այդ նպատակով հողահատկացման հետ կապված Մեղրիի շրջանի դատախազ Զոհրաբ Չայրապետյանն արգելք է դնում: Դատախազի այս քայլն արտաբնական իրավական և օրենքների շրջանակներում էր, սակայն կարելի է ենթադրել, որ դա առանց հայաստանյան կենտրոնական իշխանությունների չի եղել և մաս է կազմել ընդհանուր հակապակասությունների մոտեցման: Այդ մասին տարիներ հետո հարցազրույցում հաստատում է հենց ինքը՝ դատախազ՝ Զոհրաբ Չայրապետյանը, ասելով. «Իմ գործողությունները պաշտպանում էր Կարեն Դեմիրճյանը, նաև Դեմիրճյանի շնորհիվ էր, որ ճանապարհի շինարարությունը չի ընդհատվում»¹²²: Իր կիրառած արգելքի համար դատախազը հիմք էր ընդունել այն, որ Մեղրիի շրջագործկումը համապատասխան հողահատկացում՝ Նյուվադի-Շվանի-ձոր հատվածում չի արել: Դատախազի որոշման դեմ Ադրբեջանի բողոքների պատճառով Զոհրաբ Աբրահամյանի հանդես բերական գործ է հարուցվում, որն անակարտ է մնում ԽՍՀՄ փլուզման արդյունքում¹²³: Սակայն, այնուամենայնիվ, Խորհրդա-

յին Չայաստանի իշխանությունները, բացի վերը նշված քայլերից, փորձել են այլ ելքեր գտնել, որպեսզի մի կողմից՝ ավելի ամրապնդեն իրենց դիրքորոշումը, մյուս կողմից՝ ունենան լուծման ևս մեկ այլընտրանքային ուղի: Որպես այդպիսի լուծում առաջ են քաշել Վարդենիս-Ցերմուկ ճանապարհի կառուցման համար անհրաժեշտ հողահատկացման հարցը: Կ. Մովսիսյանն այսպես է նկարագրում խնդրի մանրամասները. «Խնդիր դրեցինք, որ մինչև Ադրբեջանի կողմից չորոշվի Վարդենիս-Ցերմուկ ճանապարհի համար նախատեսվող 230 հեկտարի հողահատկացման հարցը, մենք որոշում չենք կարող կայացնել, բանի որ այդ ճանապարհի մի հատվածը անցնում էր Զալբաջարի շրջանի տարածքով: Եվ մինչ այդ հողահատկացման մասին փաստաթղթերը չստանանք, մենք Մեղրիի որոշումը չենք կայացնելու: Եվ բանի որ նրանք այդպիսի որոշում չկայացրին, մենք էլ ձեռնապահ մնացինք որոշում կայացնելուց: Այդպիսով Մեղրի-Նախիջևան ճանապարհի շինարարությունը կարճ առավ»¹²⁴:

Ինչևէ, այդ փուլում ևս տապալվում է թուրք-ադրբեջանական ռազմավարական և պակասություններ կարևոր նպատակով՝ Սյունիքով ճանապարհի կառուցումը, որը պետք է Ադրբեջանը կապեր բռնագավթված Նախիջևանի հետ: Խորհրդային Չայաստանի ղեկավարները տարբեր մեթոդներով կարողացել են դիմագրավել՝ և՛ ադրբեջանական պահանջներին, բացահայտ ու կոպիտային խարդախանքներին, սիրաշահումներին, և՛ Մոսկվայից եկող տարատեսակ հրահանգներին ու ճնշումներին: ԽՍՀՄ փլուզումը, սկսված Արցախյան շարժումը վերափոխում են տարածաշրջանի բաղաձայնական օրակարգը, սակայն «Թուրանի ճանապարհի» կամ «Չանգեզուրի միջանցքի» գաղափարը դուրս չի գալիս ղե թուրքիայի, և ղե էլ Ադրբեջանի բաղաձայնական մտածողությունից և չի դադարում լինել պակասությունների կարևորագույն նպատակ:

Ծանոթագրություններ

1. Կիրակոսյան Ա., Մայրամուտի շեմին. հուշեր և մտորումներ, Երևան, 2019, էջ 297-298:
2. Խոսքն արդեն 1982-1988 թթ. Խորհրդային Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Քյամրան Բադիրովի մասին է:
3. Дни сквозь строчки: из рабочих дневников Карена Демирчяна, Ереван, 2010, с. 189:
4. Վիկտոր Եֆիմի Բիրյուկովը ԽՍՀՄ Պետականի նախագահի տեղակալն էր, երկաթուղային, տրանսպորտային ոլորտի հայտնի մասնագետ:
5. Дни сквозь строчки: из рабочих дневников Карена Демирчяна, с. 201:
6. Նույն տեղում, էջ 202:
7. ԽՍՀՄ պետական գործիչ Եգոր Կուզմայի Լիզաչովը 1983-1990 թթ. եղել է ԽՍՀՄ Կենտկոմի քարտուղար:
8. Дни сквозь строчки: из рабочих дневников Карена Демирчяна, с. 233:
9. Նույն տեղում, էջ 248:
10. Саркисян Ф., Уроки жизни: (воспоминания), Ереван, 2005, с. 100.
11. Միխայիլ Սերգեյի Սմիրնյուկովը եղել է ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչը:
12. Саркисян Ф., նշվ. աշխ., էջ 101-102:
13. Նույն տեղում, էջ 102:
14. Նույն տեղում:
15. Մովսիսյան Վ., Զոհի ճակատագրով, մտորումներ տղություն, Երևան, 2001, էջ 97:
16. Նույն տեղում, էջ 98:
17. Նույն տեղում:
18. Նույն տեղում, էջ 100:
19. Նույն տեղում, էջ 101:
20. Նույն տեղում:
21. Նույն տեղում, էջ 101-102:
22. Նույն տեղում, էջ 102:
23. Նույն տեղում:121. Նույն տեղում, էջ 102-103:
24. Կարապետյան Ա., «Բարեկամություն» օբյեկտի շինարարությունն սկսել, Զայկական ժամանակ, Երևան, 25.05.2000:
25. Նույն տեղում:
26. Մովսիսյան Վ., նշված աշխ., էջ 103:

ՈՒՐԲԵՆ ՄԵԼԵՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ ԳՏԱԿԱՑ «ԹՈՒՐԱՆԻ ԸՆԱՆՊԱՐԻՅԻ ԳՆՅՎԱԿԱՆ ՍԵՊԸ. «ՀԱՆԳԵՉՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔԻ» ԳԻՏԱԿԱՆՈՒՄ» (20-21-ՐԴ ԴԱՐԵՐ) ԳՐԵԻՑ



Մեծ Իշխանասար

Սյունիքյան մտահոգություններ, որոնց պատասխանն ակնկալում ենք ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերից

Սկիզբը՝ էջ 1

դարձնել անդամ, անարժանապատիվ մարդկանց բնակության տարածաշրջան:

Սյունիքում դեռևս առկա է հայրենի մեր երկրամասին իրենց տեր հռչակած հազարավոր մարդկանց փաղանգը, ուժքեր այլևս չեն ուզում կողքից հայեցողի դերում լինել...

Չենց նման արժանապատիվ մարդկանց թելադրանքով ու պահանջով է, որ փորձում ենք հանգամանային քննարկումներ կազմակերպել Սյունիքի շուրջ և Սյունիքի ներսում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ:

Մարդիկ գտնում են՝ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերը, նրանց ներկայացուցիչները, ովքեր կգան Սյունիք և կհայցեն սյունեցիների աջակցությունը, պետք է կոնկրետ, հաշվարկված-հիմնավորված տեսակետ-դիրքորոշում ներկայացնեն Սյունիքի հիմնախնդիրների և Սյունիքին սպառնացող վտանգների վերաբերյալ:

* * *

Իսկ որո՞նք են այն հիմնահարցերը, որոնք մտահոգում են սյունեցիներին...

Չիմասխնողիքներից մի քանիսը՝ ստորև...

■ Տեսե՛ք՝ 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտնի եռակողմ հայտարարությունից հետո, որ, թվում էր՝ պատերազմն ավարտվել է, Սյունիքի տարբեր ուղղություններով Ադրբեջանը մի քանի անգամ ագրեսիա ձեռնարկեց: Կորցրի՞նք մարդկային կյանքեր, տարածքներ, հաղորդակցության ուղիներ...

Եվ հիմա ոչ ոք չի կարող ասել՝ որքան տարածք է Սյունիքից մնացել հայոց ինքնիշխանության ներքո՝ մինչ այդ եղած 4506 քառակուսի կիլոմետրից:

■ Եվ յուրաքանչյուր քաղաքական ուժ պարտավոր է դիրքորոշում հայտնել՝ իսկ ինչպե՞ս, ի՞նչ եղանակով ենք օկուպացված մեր տարածքները հետ բերելու կամ ազատագրելու: Միայն թե չասե՛ք՝ սահմանազատման-սահմանազանցման միջոցով...

Չարցի նման լուծումը Սյունիքի մասին չէ, քանզի մարզի արևելյան սահմանները երկու անգամ 1920-ականներին և 1980-ականներին արդեն իսկ սահմանազատվել ու սահմանազանցվել են:

■ Սյունիքի անվտանգային համակարգը հայոց պետականության, նաև իրական ու երաշխավորված խաղաղության գլխավոր գրավականներից է:



Ներքին Յանդ

Ուրեմն և հասկանալի չի լինի երկրի կառավարմանը հավակնող որևէ քաղաքական ուժի պահվածքը, եթե չներկայացնի մեր երկրամասի անվտանգության ապահովման իր տեսլականը:

■ Սյունիքն աշխարհի, նաև Հայաստանի այն բացառիկ տարածաշրջաններից է, որտեղ խաղաղության մասին բաղձանքը բարձրագույն և անսակարկելի արժեք է: Ու թող ոչ մեկն իրավունք չվերապահի իրեն՝ սյունեցիների նվիրական այդ երազանքի շուրջ խաղեր կազմակերպել:

Մեծագույն վտանգ կարող է ներկայացնել հատկապես պատրանքային խաղաղությունն իբրև իրականություն ներկայացնելը:

■ Մենք ակնկալում ենք անկեղծ խոսակցություն այսպես կոչված «Թրամփի ուղու» կամ «Թրիփփի» շուրջ:

Նախ՝ աշխարհագրական տեսակետից կամ ֆիզիկական իմաստով ի՞նչ է իրենից ներկայացնելու այդ ուղին:

Ավելի պարզ՝ քանի՞ քառակուսի կիլոմետր է տրամադրվելու «Թրամփի ուղուն» և խոսքը ո՞ր տարածքների մասին է:

Ի՞նչ ասել է «անխոչընդոտ» ճանապարհ Ադրբեջանի երկու հատվածի միջև:

Կամ՝ որքանով է «Թրիփփը» առնչվում Սյունիքի անվտանգությանը:

Որքանով է ինչպե՞ս է պահպանվելու հայոց ինքնիշխանությունը Սյունիքի այդ հատվածում:

Չափազանց կարևոր մի հանգամանք է ևս. Սյունիքի տարածքի մի մասը մոտ 100 տարով տրվում է այլ երկրի, որն էլ (ըստ հրապարակված փաստաթղթերի) կարող է հետագայում փոխանցվել 3-րդ երկրի, բայց տեղաբնակներին կարծիքը ոչ ոք չի հարցնում՝ թեկուզև տեղական հանրաքվե կազմակերպելով:

Իսկպատե՞ իսկ Սյունիքի բնակիչներն ուզո՞ւմ են, որ Թուրքիան ու Ադրբեջանը մարզի տարածքով միմյանց կապվեն «անխոչընդոտ» ճանապարհով:

Կամ՝ եթե Ադրբեջանի երկու հատվածը տրանսպորտային ուղիով միմյանց կապելու ինտերն աշխարհին այդպես մտատանջում է, ապա ինչո՞ւ նույն մտահոգությունը չենք տեսնում Կապան-Գորիս, Կապան-Ճակատեն, Կապան-Եղվարդ ճանապարհների ապաշրջափակման հարցում:

Ինչո՞ւ Մեղրու բնակիչը չպետք է կարողանա Նախիջևանով՝ «անխոչընդոտ», հասնել մայրաքաղաք:

■ **Մեզ համար շատ կարևոր է քաղաքական ուժերի վերաբերմունքը Հայ առաքելական եկեղեցու հանդեպ:**

Չի՞չենք՝ քրիստոնեությունը Հայաստան է մուտք գործել առաքյալների ժամանակ՝ Սյունիքից:

Սյունիքն էր, որ դարեր շարունակ դրոշակակիր էր ունիթորության, քաղկեդոնության և մյուս աղանդների դեմ պայքարում:

Այո, Հայ առաքելական եկեղեցին լրջագույն բարեփոխումների կարիք ունի, բայց դա եկեղեցու ներքին գործն է:

Մինչ այդ շարունակում ենք հաստատուն մտալ Հայոց նվիրապետի հետ և դատապարտում ենք նրա դեմ ուղղված ամեն մի գործողություն, որ հակասում է ՀՀ սահմանադրությանը:

■ **Սյունիքի ժողովրդագրական վիճակը...**

Ինչպե՞ս է ստացվել, որ մարզի ոչ վաղ անցյալի մոտ 160 հազար բնակչությունը նվազել է գրեթե 1/3-ով կամ 50 հազարով:

Պատկերացնո՞ւմ ե՞ք՝ ժողովրդագրական ինչ պատկեր կունենանք, եթե մարզի հանդեպ ներկայիս վերաբերմունքն արմատապես չփոխվի:

■ **Իսկ թե՞ ինչ է կատարվում մարզի կրթական համակարգում՝ չի տեղավորվում ողջամիտ հայ մարդու երևակայության մեջ:**

2025-ին փակվեց 100-ամյա և մեծահամբավ երկու քոլեջ, հիմա էլ փակման են պատրաստում 47 հանրակրթական դպրոց՝ շատ լավ իմանալով՝ դպրոցներից զրկված բնակավայրերը վաղ թե ուշ գրեթե անմարդանակ են լինելու: Նման նախադեպեր ունենք: Ընդ որում՝ խոսքը սահմանապահ և բարձր լեռնային գյուղերի մասին է:

Չիմա՞ ինչ՝ հաշտվե՞նք 47 գյուղի դեմ ձեռնարկված գրոհին...

■ **Անհրաժեշտ է հստակ վերաբերմունք Ադրբեջանի նախագահի քաջալերանքով սկիզբ դրված «Արևմտյան Ադրբեջան» ծրագրի հանդեպ:**

Այնտեղ չեն էլ թաքցնում ծրագրի թիրախներից առաջինը Սյունիքն է:

Ինչպե՞ս ենք դիմագրավելու մեր երկրամասի լինելությանը սպառնացող այդ ծրագրերին:

■ Սյունիքը և Հայոց Արցախը՝ ի սկզբանե, մի ամբողջություն են եղել՝ և՛ ժողովրդագրական տեսակետից, և՛ կենցաղով, ավանդույթներով, բարբառով, և՛ անվտանգության միասնական համակարգով:

Այնպես որ՝ իրական ու ողջամիտ սյունեցու համար միևնույնը չէ, թե ի՞նչ է հետայսու լինելու բռնազավթված Արցախի հետ, ի՞նչ է ներկայումս կատարվում Արցախի մեր սրբավայրերի հետ, ի՞նչ է կատարվում Բաթլի զնդաններում ապօրինաբար պահվող Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության և հայ գերիների հետ:

■ Ակնկալում ենք՝ Սյունիք այցելող քաղաքական ուժերը կպատասխանեն նաև այս հարցին՝ ինչպե՞ս են պատկերացնում Հայաստանի Հանրապետության հարաբերություններն Իրանի Իսլամական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հետ՝ նկատի ունենալով Իրանի դեմ սանձազերծված պատերազմը, նկատի ունենալով նաև ՌԴ-ի՝ արդեն իսկ ունեցած ներկայությունը մեր անվտանգային համակարգում, ինչպես և տնտեսական կյանքում:

* * *

Եվ նման բազմաթիվ հարցեր... Խոսակցության թեման, ինչպես նկատեցիք, Սյունիքն է լինելու՝ իր ներկա կացությամբ, իր հիմնախնդիրներով, տեղի ունեցած և ունեցող զարգացումներով:

Ուստի և ուզում ենք լսել ինչպես մեր հայրենակիցների, այնպես էլ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի դիրքորոշումը սյունիքյան հիմնախնդիրների վերաբերյալ:

Հարթակը հաճույքով կտրամադրենք բոլորին, ովքեր անհաղդ կրոնը չեն վերոնշյալ մտահոգություններին, ովքեր նույնիսկ չեն կիսում խմբագրության մոտեցումները և պատրաստ են ներկայացնել իրենց պատկերացումները...

Առայժմ այսպանը... Շնորհակալություն ուշադրության համար: Մինչև նոր հանդիպում...



Ցավակցության գիր Կապանում Իրանի Իսլամական Յանրապետության գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամինին

Սեծարգո պարոն Մորթեզա Աբեդին Վարամին «Սյունյաց Երկիր» խմբագրակազմի, պարբերականի հազարավոր հետևորդների և անձամբ մեր վիշտն ենք արտահայտում Իրանի Իսլամական Յանրապետության հոգևոր առաջնորդ այսպիսի Ալի Խամենեյիի ողբերգական մահվան կապակցությամբ: Եվ մեծագույն այդ կորստի առիթով ցավակցում ենք Ձեզ ու բարեկամ Իրանի քաջակորով ու հպարտ ժողովրդին: Սյունիքում հիշում են և երբեք չեն մոռանա, որ երջանակահիշատակ Ալի Խամենեյին հայ ժողովրդի ջերմ բարեկամն էր, 2020 թ. կապիտուլյացիայից հետո և դրան հաջորդած

արհավիրքների ընթացքում Սյունիքի ևստանալի կամ ստատուս քվոյի պահպանման ու մեր երկրի հարավային սահմանների անփոփոխության բացառիկ ջատագով: Մենք հիշում ենք ու երբեք չենք մոռանա, որ Իրանը միշտ էլ մեր կողքին է եղել, երբ հայ ժողովրդին ու հատկապես Սյունիքին վտանգ է սպառնացել: Նկատի ունենք մասնավորապես Դավիթ Բեկի գլխավորած ազգային-ազատագրական պայքարը, Գարեգին Նժդեհի գլխավորած գոյամարտը 20-րդ դարասկզբին՝ հանուն Սյունիքի ազատության, ինչպես և Արցախյան առաջին հերոսամարտը: Նկատի ունենք մեծածավալ այն ծրագրերը, որ վերջին տարիներին

իրականացվում է Սյունիքի մարզում: Իրանի հերոսական ու անվեհեր ժողովրդին ցանկանում ենք տոկոսություն և մեծ փորձությունն արժանապատվորեն հաղթահարելու վճռականություն: Միևնույն ժամանակ դատապարտում ենք ԱՄՆ-ի ու Իսրայելի՝ ոչնչով չհիմնավորված ագրեսիան, այդ պետությունների պահվածքը գնահատում անթույլատրելի և գոյություն ունեցող աշխարհակարգը, միջազգային իրավունքը բանդաբարափ անելուն միտված հերթական արգահատելի քայլ: Մենք զորակցում ենք Իրանի սզակիր ու վշտակիր ժողովրդին և աղոթում նրա հաղթանակի համար: **ԱՍՏՎԵ ԱԼԵՔՍԱՆՅԱԼ**



ՀՀ-ում Իրանի դեսպան. «Սյունիքի հետ կապված մեր կարմիր գիծը պահպանվում է, անկախ նրանից՝ պատերազմի մեջ ենք, թե ոչ»

Տարածաշրջանում, հատկապես Սյունիքում գեոպոլիտիկ փոփոխությունների բացառումը, որը մեզ համար կարմիր գիծ է, պահպանվում է, անկախ նրանից՝ պատերազմի մեջ ենք, թե ոչ: Այս մասին հայտարարեց ՀՀ-ում Իրանի դեսպան Խալիլ Շիրզոյանին: Նա ընդգծեց՝ «Չանգեզուրի միջանցքը» արհեստական տերմին է: «Միջանցքի գաղափարը, որ որոշները հետամուտ էին լինում, ենթադրում է ինքնիշխանության հարցում որոշակի զիջումներ, ինչը Չայաստանի համար ընդունելի չէ և նաև Իրանի համար ընդունելի չէ: Սի արհեստական անուն էլ դրա համար ներկայացվել էր՝ «Չանգեզուրի միջանցք», որի վերաբերյալ Իրանը վճռականորեն հայտարարել էր, որ ոչ մի գեոպոլիտիկ փոփոխություն, ինչպես նաև ինքնիշխանության հարցում որևէ փոփոխություն Իրանը չի հանդուրժի: Եվ Իրանի Իսլամական Յանրապետության գերագույն հոգևոր առաջնորդը, որի կորուստը մենք այսօր սզում ենք, ուներ բազմաթիվ հայտնի խոսքեր, որոնք քննադատում էին հենց այդ արհեստածին գաղափարը»:

02.03.2026

Սյունիքի մարզի դատախազությունը՝ լավագույն ստորաբաժանում

Չայաստանի Յանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը 2025 թվականի մարտի 14-ին, Դատախազության կոլեգիայի ամփոփիչ նիստում, հայտարարել էր, որ տարեկան երկու անգամ (հուլիսի վերջին՝ կիսամյակային և փետրվարին՝ տարեկան) կատարվելու է մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների աշխատանքի գնահատում: Գնահատումն իրականացվում է, ի թիվս այլնի, հիմք ընդունելով հետևյալ չափանիշները՝ Պետական և համայնքային շահերի պաշտպանության հայցերով պետությանը և համայնքին վերջնական դատական ակտով վերադարձված գումարի չափը: Քրեական վարույթներով, ինչպես նաև դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ պետությանը, համայնքին, պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման գումարի չափը: Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով մեղադրական եզրակացությամբ դատարան հանձնված քրեական վարույթների թիվը: Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով վերջնական դատական ակտերի թիվը: «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության էլեկտրոնային համակարգի լրացվածության տոկոսը:



Գնահատման կարգն ու չափանիշները սահմանվել են ՀՀ գլխավոր դատախազի Իրամանով, որի հիման վրա՝ 2026 թվականի փետրվարին ամփոփվել է մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների աշխատանքը: Նշված չափանիշներով կատարված գնահատման հիման վրա՝ որոշվել են 2025 թվականի ընթացքում լավագույն ցուցանիշներն արձանագրած ստորաբաժանումները: 1-ին հորիզոնականը զբաղեցրել է Սյունիքի մարզի դատախազությունը: Մասնավորապես՝ Սյունիքի մարզի դատախազությունը, ի թիվս այլնի, պետական շահերի պաշտպանության լիազորության շրջանակում, պետությանը և վերադարձրել շուրջ 5 հա մակերեսով 10 անշարժ գույք, շուրջ 103 միլիոն դրամ: 28.02.2026



Մենք այցելեցինք Կապանում ԻԻՀ հյուպատոսարան և ցավակցություն հայտնեցինք Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեյի ողբերգական մահվան կապակցությամբ:

«Սյունյաց Երկիր» խմբագրակազմի անունից Սամվել Ալեքսանյանը գրառում կատարեց սզո մատյանում՝ ցավակցություն հայտնելով բարեկամ և հարևան Իրանի սզակիր ու վշտակիր ժողովրդին: Իսկ գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամինը՝ գրույցի ընթացքում, տեղեկություններ փոխանցեց այն վճռականության ու հաստատականության մասին, որով տեղի ունեցավ Իրանի հերոսական ժողովրդը՝ ագրեսիոների դեմ մղվող պատերազմում:

Ըստ գլխավոր հյուպատոսի՝ ամերիկայիսրայելական ագրեսիան շարունակվելու դեպքում տարածաշրջանում լարվածությունը կխորանա, որը ցանկալի չէ: Նշվեց այն մեծ դերակատարությունը, որ ունեցել է երջանակահիշատակ Ալի Խամենեյին՝ հայ-իրանական բազմադարյա բարեկամությունը նոր աստիճանի բարձրացնելու ուղղությամբ: Նշվեց Ալի Խամենեյի բացառիկ դերակատարությունը Սյունիքի ներկայիս ստատուս քվոյի և Չայաստանի հարավային սահմանների անձեռնմխելիությունը պահպանելու գործում: Տեղեկացանք նաև՝ պարոն Աբեդինը նոր է վերադարձել Նորդուզից ու Մեղրիից, որտեղ Իրանի քաղաքացիների՝ երկրից դուրս գալու որևէ միտում չի նկատել, ինչը ևս մեկ վկայություն է առ այն, որ Իրանի ժողովրդը համախմբված է երկրի առաջնորդների շուրջ և պատրաստ է մինչև վերջ պաշտպանելու Իրանի Իսլամական Յանրապետության ինքնիշխանությունն ու արժանապատվությունը:

03.03.2026

ՉՊՄԿ-ն դարձել է Կանադա-Եվրասիական առևտրատնտեսական պալատի (CECTE) անդամ

Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատը (ՉՊՄԿ) ուրախ է հայտարարել Կանադա-Եվրասիական առևտրատնտեսական պալատին (CECTE) իր պաշտոնական անդամակցության մասին, որը կարևոր քայլ է միջազգային համագործակցության ամրապնդման և կանադական ու եվրասիական բիզնես համայնքների հետ համագործակցության ընդլայնման գործում:

«Կանադան հանքարդյունաբերության առաջատար ուղղություններից է և գտնվում է ոլորտի արդիականացման ու լավագույն փորձի կիրառման առաջնագծում: Մենք տեսնում ենք այս համագործակցության զգալի ներուժը Չայաստանի հանքարդյունաբերության ոլորտի համար՝ հատկապես հանքային հարստությունը ժողովրդի շահերին ծառայող, կայուն և արդյունավետ կառավարվող բիզնես ակտիվների վերածելու հարցում կանադական փորձի ուսումնասիրության և կիրառման տեսանկյունից», - նշել է Վարդան Ձիսկյանը: Ողջունելով ՉՊՄԿ-ի անդամակցությունը Պալատին՝ CECTE-ի նախագահ Ռոբերտ Ավագյանը նշել է.

«Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի անդամակցությամբ մեր Պալատին և Չայկական հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիայի հետ մեր գործընկերության մեկնարկով մենք բացում ենք հայ-կանադական բիզնես համագործակցության նոր էջ: Հանքարդյունաբերությունն ու մետալուրգիան մեր Պալատի առանցքային ոլորտներից են, և համարելով



Կանադայի լայն փորձը Չայաստանի զգալի ներուժի հետ՝ մենք կարող ենք միասին հասնել նոր և նշանակալի արդյունքների: Մենք շարունակում ենք հանձնառու մնալ ապագա համագործակցության հնարավորությունների ամրապնդմանն ու ընդլայնմանը»:

Այս անդամակցության միջոցով ՉՊՄԿ-ն նպատակ ունի ակտիվորեն մասնակցել CECTE-ի կողմից իրականացվող նախաձեռնություններին, բիզնես ֆորումներին և

ցանցային հարթակներին՝ նպաստելով պատասխանատու ռեսուրսների զարգացման, նորարարության և ներդրումային հնարավորությունների վերաբերյալ երկխոսությանը: Համագործակցությունը միաժամանակ նպաստում է Չայաստանի տեսանելիության բարձրացմանը համաշխարհային հանքարդյունաբերական և բիզնես ցանցերում:

27. 02. 2026

Բորիկ Մինասյանը 70 տարեկան է շնորհավորում ենք



ՄՈՒՍԱՆԱ ՄԱՆՏՈՒՐՈՍՅԱՆ
Մշակույթի և հասարակական գործիչ

Հարյուրավոր աշակերտների վարպետ ուսուցիչը ոչ միայն նկարչության տեխնիկայի գաղտնիքներն է ուսուցանել, այլև ուղեկցել նրանց՝ արվեստի կախարհական աշխարհ, տարել համաշխարհային մշակույթի ճանապարհներով, սեր և ճաշակ դաստիարակել:

Լինելով ազգային մտածողության կրող արվեստագետ՝ իր սաներին կրթել է ազգային մշակույթը ճանաչելու, յուրացնելու ոգով՝ հայ մշակույթի անհատում գանձերը դարձնելով սեփական ձեռագիր:

Նրա աշակերտներից շատերը գնացին հենց իր ճանապարհով:

1987 թ. Կապանի պատմության մեջ կարևոր էջ գրվեց. բացվեց Գեղագիտական դաստիարակության կենտրոն:


1990 թվականին հանրահայտ արվեստաբան Յերմիկ Իգիթյանի ձեռնամբ և տեղական իշխանությունների աջակցությամբ հիմնադրվեց Կապանի ժամանակակից արվեստի թանգարանը, որի պատասխանատու նշանակվեց Բորիկ Մինասյանը:

Սկսվեց նրա գործունեության մի նոր և բուռն ժամանակաշրջան: Թանգարանն ի սկզբանե դարձավ Կապան քաղաքի մշակութային այցեքարտերից մեկը: Կապան էր հասել ժամանակակից հայ նկարչների (1970-80 թթ.) 493 աշխատանք, որոնց թվում՝ Ռուդոլֆ Խաչատրյանի, Վրոյր Գալստյանի, Արմինե և Սարո Կալենցների, Անատոլի Գրիգորյանի, Վարուժան Վարդանյանի, Բայանուր Աշոտի և այլոց գործեր, որոնք նոր ասելիք էին ներմուծել հայ նկարչության մեջ:

Թանգարանը՝ իր նշանակությամբ Սյունիքում լինելով եզակի, գեղագիտական դաստիարակության այն կարևոր օղակը, որտեղ մարդը ոչ միայն տեսնում է, այլև մաքրվում հոգեպես:

Տարիների ընթացքում թանգարանում բազմաթիվ ցուցահանդեսներ, դասախոսություններ, հանդիպումներ են կազմակերպվել: Հազարավոր այցելուներ հիացել են թանգարանի ցուցահանդեսներով: Այն կենդանի օրգանիզմ է:

Մոտ չորս տասնամյակ Բորիկ Մինասյանը մեծ սեր ու նվիրում է ներդրել թանգարանում: Թվում է, թե ինչ մի դժվար բան է՝ բացել և փակել թանգարանի դուռը: Նա արվեստագետ նկարիչ է, հավաքածուի յուրաքանչյուր նկար ոչ միայն պահպանելու, այլ նաև ներկա-



յացնելու մեծ պատասխանատվություն ունի: Հաղթահարելով բազում դժվարություններ, քյուրկրատական խոչընդոտներ՝ պաշտպանեց թանգարանի նկատմամբ յուրաքանչյուր ոտնձգություն: Քանի անգամ փորձ արվեց նկարների հավաքածուն Երևան տեղափոխել, տարածքը բռնագավթել, բայց նա անդրդվել էր, կռիվ տվեց և կարողացավ պահել... Եկան ավելի բարենպաստ ժամանակներ:

2019 թ. թանգարանը վերանվանվեց «Կապանի արվեստի թանգարան» ՀՊՄԿ-ի, և Բորիկ Մինասյանը շարունակեց ղեկավարել՝ որպես տնօրենի պաշտոնակատար:

Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի ամենայն ուշադրության և հոգատարության շնորհիվ համայնքի ներդրման և սուբվենցիոն ծրագրերի աջակցությամբ,

փոխվեց թանգարանի արտաքին տեսքը՝ այն դարձավ ժամանակի ընկալումների համահունչ:

Փոխվեցին նաև թանգարանի գործունեության շրջանակները: Հաճախակի կազմակերպվող ցուցահանդեսներին, հանդիպումներին կարելի է նկատել կապանյան արվեստասեր հասարակության ներկայությունը, որը վկայում է այն սիրելի վայր է, այստեղ արվեստ է արարվում: Թանգարանում կարելի է ավելի հաճախ հանդիպել օտարերկրացի հյուրերի, գեոսաշրջիկների, Սյունիքի մարզի դպրոցականների: Եվ բոլորին դիմավորողն ու ճանապարհորդ նորից ինքն է՝ Բորիկ Մինասյանը, միշտ ժպտադեմ, բարի, կամեցող, չարաճճի 70-ամյա պատանին, երեք հրաշալի գավակի հայրը, արդեն յոթ թոռան պապը, հայրենապաշտ ու հայրենատեր, իմ խենթ արվեստագետ ընկերը:

Եթե ավելացնենք նաև, որ այս դժվարին ճանապարհին հասցրել է նաև քանդակել՝ մասնակցելով Տերմուկ քաղաքում քանդակի հանրապետական սիմպոզիումի, որի շնորհիվ իր գործերից մեկը՝ «Արցախուհին», տեղադրված է հենց մեր քաղաքի Սիրահարների այգում, «ժառանգություն» քանդակը՝ Տերմուկ քաղաքում, Քաջարան քաղաքում՝ զոհված ազատամարտիկների պանթեոնում տեղադրված խաչքարը, քաղաքային մանկական պատկերասրահում՝ «Մուսա» հարթաքանդակը:

Այս ամենի հետ փորձեր է արել պոեզիայում ու հրատարակել է «Ի սեր Աստուծ» գիրքը, որը լույս է տեսել 1998 թ.:

Նա ՀՀ նկարիչների միության անդամ է 1992 թվականից, ՀՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

Միով բանիվ, արձանագրեմք՝ արվեստագետ, գեղանկարիչ, հայրենատեր մարդու կյանք է, ով մեզ հետ է և ընդամենը 70 տարեկան:

Շնորհավոր հորեյանը, Բորիկ Մինասյան: Շարունակիր ապրել, ժպտալ, խենթանալ ու ստեղծագործել, իմ լավ բարեկամ: Վարձքդ ի կատար:

Սյունյաց երկիր
ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՄԻ ԳՐԱԳՐԱՐՈՒՄ ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄՊԼԵՔՍԻ Ի-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՍՎԵՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
2026 թվականի ապրիլի 06-ին կկայանա «Սյունիք» ջրօգտագործողների ընկերության գլխավոր հաշվապահի պաշտոնի համար մրցույթ: Մրցույթի մասնակցության հայտերն ընդունվում են մինչև 2026 թվականի ապրիլի 03-ը, ժամը 14:00: Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Լ. Ադոնցի 13:

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կյուբերը ներկայացնել մեքենագիր վիճակում:
«ԳՐԱՎԱԾՂ – ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնում
տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
© Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատուկյաց փող., 70ա շենք
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 18.02.2026թ.: